Հավելված N 1
ՀՀ փոխվարչապետի
N 504-Ա որոշման

«ԳՅՈՒՄՐԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ» ԾՐԱԳԻՐԸ

1.	Ծրագրի նպատակը	Յուրաքանչյուր տարի Տիրամայր Հայաստանի կուսաստանի հոգածության տակ գտնվող ծնողազուրկ և անապահով ընտանիքների երեխաներից առնվազն 7-8 հոգի ընդունվում է Գյումրու տարբեր բարձրագույն ուսումնական հաստատություններ և մասնագիտացված ուսումնարաններ: Սակայն նրանց մեծ մասը սովորելու ընթացքում ապրելու տեղ չունի, իսկ կուսաստանում նրանք այլևս չեն կարող մնալ, քանի որ այնտեղ ապրում և դաստիարակվում են 3-17 տարեկան երեխաներ, և նպատակահարմար չէ հասուն երիտասարդների և մանկահասակ երեխաների նույն տեղում ապրելն ու սովորելը: Բացի այդ, կուսաստանում պարզապես տեղ չկա նրանց համար: Այդ պատճառով Հայաստանի Հանրապետության փոխվարչապետի 2021 թվականի դեկտեմբերի 30-ի N 1014-Ա որոշմամբ բարեգործական որակված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի քաղաք Գյումրի Ե. Չարենցի 6/1 տուն հասցեում «Անարատ հղության հայ քույրերի միաբանության Տիրամայր Հայաստանի կուսաստան» կրոնական կազմակերպության կողմից իրականացվող «Գյումրի երիտասարդական կենտրոն» ծրագրով կառուցվել է երիտասարդական կենտրոն՝ կուսաստանի սաների, ինչպես նաև այլ մարզերից եկած անապահով ընտանիքների լավ սովորող մինչև 40 ուսանողի համար, ուր նրանք անվճար կապրեն ուսումնառության տարիների

		ընթացքում: Կենտրոնում երիտասարդներն անվճար կապահովվեն համակարգչային և այլ անհրաժեշտ տեխնիկայով, կոմունալ-կենցաղային բոլոր հարմարություններով: Ծրագրով նախատեսվում է ուսումնառության տարիների ընթացքում երիտասարդական կենտրոնում անվճար ապրող ուսանողների բնականոն կյանքի համար ներմուծել և ձեռք բերել կահույք, համակարգչային սարքավորումներ, կենցաղային էլեկտրական տեխնիկա, խոհանոցային կահույք, խոհանոցային տեխնիկա և խոհանոցային սարքեր:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով արտոնություններից:
3.	Բարեգործը	1) «Նոթոը Աղմենի» բարեգործական կազմակերպություն (Ֆրանսիա), 20,000,000 դրամ. 2) Կաթողիկե եպիսկոպոսների միություն (Իտալիա), 15,000,000 դրամ. 3) Անհատ բարերար Ռաֆֆի Արթինյան (ԱՄՆ), 20,000,000 դրամ:
4.	Ծրագիրը կատարողը	«Անարատ հղության հայ քույրերի միաբանության Տիրամայր Հայաստանի կուսաստան» կրոնական կազմակերպություն (հասցե՝ Գյումրի, Ե. Չարենցի 6, ՀՎՀՀ՝ 05513266):
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Շիրակի մարզ, քաղաք Գյումրի, Եղիշե Չարենցի 6/1 տուն, սոցիալական բնագավառ:
6.	Ծրագրի բյուջեն	55,000,000 դրամ:

7.	Բարեգործություն ստացողը	Շիրակի և Լոռու մարզերի, ինչպես նաև Վրաստանի հայաբնակ գյուղերի ծնողազուրկ և անապահով ընտանիքների 17-25 տարեկան մինչև 40 երիտասարդ աղջիկներ և պատանիներ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2025 թվականի օգոստոսի 10-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Կահույքի, համակարգչային սարքավորումների, կենցաղային էլեկտրական տեխնիկայի, խոհանոցային կահույքի, խոհանոցային սարքավորումների ձեռքբերում, ներմուծում և տեղադրում՝ 55,000,000 դրամ, նախատեսվում է իրականացնել 2025 թվականի օգոստոսի 10-ից մինչև 2025 թվականի դեկտեմբերի 31-ը:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) Կահույքի, համակարգչային սարքավումների, կենցաղային էլեկտրական տեխնիկայի ձեռքբերում և տեղադրման աշխատանքների իրականացում՝ 35,000,000 դրամ, առանց ավելացված հարկի. 2) Խոհանոցային կահույքի, խոհանոցային սարքավորումների և կենցաղային սարքերի ներմուծում՝ 20,000,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Նախատեսված չեն:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ մարմինների հետ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Շիրակի մարզպետի աշխատակազմի, ինչպես նաև Գյումրու համայնքապետարանի հետ:

13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հիմնական վերահսկողությունը կիրականացվի ֆինանսավորող բարերարների կողմից: Այդ նպատակով նրանք կներգրավեն ներքին խորհրդատուների, տեղական և միջազգային աուդիտորների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

30.07.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ